ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ՝ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

Օգոստոսի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 55-ամյա տարեդարձի կապակցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց Հայրապետական մաղթանք: Արարողությանը ներկա էին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, բարձրաստիճան եկեղեցականներ, Հայաստանի և Սփյուռքի բոլոր թեմերից ժամանած և վանաբնակ միաբաններ, Մայր Աթոռի պաշտոնեությունը և բարեպաշտ հավատացյալներ:

Հանդիսավոր թափորի ուղեկցությամբ, Մայր Տաճարի զանգերի ղողանջների ներքո, Նորին Սրբությունը Վեհարանից ուղղվեց դեպի տաճար, ուր Միածնաէջ Մայր Տաճարի Իջման Ս. Սեղանի առջև կատարվեց Հայրապետական մաղթանքի կարգը:

Մինչ արարողությունը Հայոց Եկեղեցու ողջ հոգևոր դասի և Մայր Աթոռի պաշտոնեության անունից Վեհափառ Հայրապետին շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսք ուղղեց Մայր Աթոռի միաբան Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: Գերաշնորհ Սրբազան հայրն անդրադարձավ Վեհափառ Հոր գործունեությանը՝ ընդգծելով Նորին Սրբության մեծագույն ավանդը հոգևոր դասի երիտասարդ սերնդի պատրաստման, ինչպես նաև ժողովրդի քրիստոնեական դաստիարակության գործում: «Վեհափառ Տե՛ր, այսօր Ձեր ծննդյան տարեդարձն է, և մենք բոլորս հավաքվել ենք այս սուրբ խորանի՝ աստվածային տեսլյան այս փառավոր կենտրոնի առջև՝ աստվածային սիրո էջքի վայրում: Եվ այստեղ, որպես 132-րդ Հայրապետի, Ձեր շուրջը հավաքված ասում ենք. «Քահանայք Քո զգեցցին զարդարութիւն եւ սուրբք Քո ցնծալով ցնծասցեն»: Այս հոգևորականները՝ քահանաները, և այս ժողովուրդը՝ զգեցած արդարության սուրբ խորհուրդը, հավաքվել են, որպեսզի Դուք նմանվեք այն քահանայապետին, որ Մելքիսեդեկ կոչվեց, և աղոթում են առ Բարձրյալն Աստված, որ շարունակեք ցուպը ձեռքին առաջնորդել մեր ժողովրդին»,- ասաց Սրբազան Հայրն իր խոսքում՝ շնորհազարդ Հայրապետին մաղթելով արգասավոր գահակալության երկար քաջառողջ տարիներ, անսպառ ուժ և կորով՝ ի բարօրություն հավատավոր հայ ժողովրդի և ի պայծառություն Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու:

Հոգեպարար աղոթքի վերջում Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց, որ կյանքի 55-րդ տարեդարձին շրջապատված է տեսնում իրեն հոգևոր դասով, Մայր Աթոռի պաշտոնեությամբ և հավատացյալ բարեպաշտ ժողովրդի բազմությամբ, և իր գնահատանքն ուղղեց նրանց՝ իրենց անձնվեր ծառայությամբ ու աշխատանքով և աղոթական կյանքով Հայաստանյայց Եկեղեցու առաջընթացին ու բարգավաճմանը նպաստելու համար: Նորին Սրբությունն իր խոսքում նաև մաղթեց. «*Մենք, Իջման Սուրբ Սեղանի առջև կանգնած, աղոթք ենք բարձրացնում առ Աստված՝ մաղթելով, որ Տերը խաղաղության, առաջընթացի և բարօրության մեջ պահի հայրենի մեր երկիրը և աշխարհասփյուռ ազգս հայոց, որպեսզի աստվածփառաբա-*

նությամբ ապրեն իրենց կյանքի օրերը և ապրեն աղոթքով՝ ստեղծագործելով, կերտելով ու բարեկարգելով ինչպես հայրենական մեր կյանքը, այնպես էլ իրենց անձնական կյանքը»:

Արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը բաշխելով հավատավոր ժողովրդին, թափորի ուղեկցությամբ վերադարձավ Վեհարան, ուր ընդունեց Մայր Աթոռի միաբանությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ